# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/1/1

ք. Երևան «3» 03 2021թ.

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը**, ի դեմս գործադիր տնօրեն **Արթուր Սողոմոնյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, և **«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Գրիշա Բաղալյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Կատարող**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Տեխնիկական հսկողության» ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով շինարարական աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **1 (մեկ) տարին**:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:[17]

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

---

[17] *Կիրառվում է, եթե կնքվում է շինարարական օբյեկտի կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիր:*

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **229,000 (երկու հարյուր քսանինը հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին

կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

---------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ,
Ք. Իջևան, Նալբանդյան 2

ՀՎՀՀ՝ 07616336
Հ/հ՝220103330787000
Բանկ՝«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Տավուշ մ/ճ

Տնօրեն Գրիշա Բաղալյան

---------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1
«3» 03 2021թ. կնքված
ՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2021/1/1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը* |
| 1 | 71351540 | ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի «Այգեպար բնակավայրի խմելու ջրագծի վերակառուցում» Ծրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն | դրամ | 229,000 | 1 | ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնք Այգեպար բնակավայր | Շինարարական աշխատանքների սկզբից մինչև ավարտ (Նախատեսվում է 60 օր) |

| | |
|---|---|
| *Ֆինանսավորման աղբյուր* | 2021թ. ՀՀ պետական բյուջե |
| *Պատվիրատու* | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| *Աշխատանքի տևողը* | Ըստ ծավալաթերթ-նախահաշվի , որը կցվում է |
| *Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ* | • Իրականացնել ամենօրյա տեխնիկական հսկողություն՝ համաձայն քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. ՙՇինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ՚ հրամանում բերված դրույթների՝ ապահովելով Ծառայությունը մատուցողի կողմից նշանակված տեխնիկական հսկիչի ամենօրյա ներկայությունը շինարարական օբյեկտում (ընդ որում տեխնիկական հսկիչը պետք է ընդգրկված լինի Ծառայությունը մատուցողին տրված լիցենզիայի պատասխանատու անձանց ներդիրում: Տվյալ շինարարական տեղամասում նշանակված տեխնիկական հսկիչի անհարգելի բացակայության դեպքում Ծառայություն մատուցողը պայմանագրով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:<br>• Հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ աշխատանքային նախագծին, կապալի պայմանագրի դրույթներին և գործող շինարարական նորմերին<br>• Հաստատել և հսկել աշխատանքների իրականացման ծրագիրը<br>• Ստուգել և հսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պահանջներին<br>• Գնահատել և հսկել շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի<br>• Ստուգել բոլոր այն լաբորատոր փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար<br>• Ստուգել բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար<br>• Կատարել որակի և կատարված ծավալի ամենօրյա հսկում: Հաստատել վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են անհրաժեշտ որակով և ծավալով<br>• Կապալառուին պարզաբանել նախագծային փաստաթղթերի հետ կապված հարցերը: Անհրաժեշտության դեպքում առաջարկել աշխատանքային ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություններ կամ առաջարկել կատարել լրացուցիչ վճարումներ (երկու դեպքում էլ անհրաժեշտ է Պատվիրատուի համաձայնությունը)<br>• Իրականացնել հսկողություն աշխատանքային տեղամասերում շինարարական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով: Հրահանգել կապալառուին ապահովել աշխատանքային տեղամասերում անհրաժեշտ նշանների, լուսավորության, անվտանգության այլ միջոցների առկայությունը |

| | |
|---|---|
| | • Կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի տեխնիկական հսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների օրական հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր)<br>• Ստուգել և հաստատել կապալառուի կողմից նախապատրաստված կատարողական գծագրերը: |
| *Հաշվետվության ներկայացման պահանջներ* | • Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին Ծառայությունների վերաբերյալ <u>ընթացիկ և ավարտական հաշվետվություններ</u>, որոնք հանդիսանում են Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր:<br>• <u>*Ընթացիկ հաշվետվությունները*</u> ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտի ժամանակահատվածին համապատասխան, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հավաստող ու հիմնավորող տեխնիկական փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրություն տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ.հսկողության ծառայությունների վերաբերյալ, տեղեկանք (Ձև 2), լաբորատոր փորձարկումների արդյունքներ, նյութերի, կոնստրուկցիաների որակի համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով), սխեմաներ, թույլտվություններ, և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):<br><u>*Ավարտական հաշվետվությունը*</u> պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական գծագրեր, ավարտական կատարողական ակտ, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, ավարտված շինարարական օբյեկտի լուսանկարներ (տպագրված և էլեկտրոնային կրիչով)<br>• <u>*Ընթացիկ հաշվետվությունները*</u> ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:<br>• <u>*Ավարտական հաշվետվությունը*</u> ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական ակտը Ծառայություն մատուցողի կողմից ստորագրելուց հետո երկօրյա ժամկետում: |
| *Նորմատիվային պահանջներ* | Տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնել համաձայն՝<br>• ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի<br>• Քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի հրամանի<br>• ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշման |

*Օրագրի մեկնարկի մասին կտեղեկացվի գրավոր

Ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները

**<< Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացում>>**

լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

| Չափաբաժինների համարները | | Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները). |
|---|---|---|
| 1 | | 2 |
| 1 | ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ,Այգեպար բնակավայրի խմելու ջրագծի վերակառուցում<br>Օրագրի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն | **Հիդրոտեխնիկական** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
[illegible]

------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ,
Ք. Իջևան, Նալբանդյան 2

ՀՎՀՀ՝07616336
Հ/հ՝220103330787000
Բանկ՝«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Տավուշ մ/ճ
Տնօրեն Գրիշա Ղազարյան

------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

## ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Այգեպար բնակավայրի խմելու ջրագծի վերակառուցում

| NN ը/կ | Հիմնա-վորում | Աշխատանքի անվանումը | Չափ. միավ. | Քա-նակ | 1 միավ. ընդ.արժ. հազ.դր. | Ընդհա-նուր ար-ժեքը հազ.դր. | Ընդամենը տոկոսներով |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | **Հողային աշխատանքներ** | | | | | 1,93% |
| 1 | 1-962 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով, հենարանների տակ | 100 մ³ | 0,009 | | | |
| 2 | 27-24 | Գրունտի տոփանում խճով | 100 մ² | 0,018 | | | |
| 3 | 11-11 | Բետոնե նախաշերտի կառուցում. Կ-7,5 դասի բետոնից | մ3 | 0,200 | | | |
| 4 | 9-207 | Մետաղական խողովակից հենարանների մոնտաժում/11հատ/ | տն | 0,192 | | | |
| 5 | Ինֆ. տեղ. | Թիթեղ պողպատե , հաստ 200*200*5մմ | մ² | 0,440 | | | |
| 6 | 22-66 | Պողպատե խողովակի տեղադրում d=108x4,0մմ,L-1,4 մ | մ | 15,400 | | | |
| 7 | 22-67 | Պողպատե կիսախողովակի տեղադրում d=127x4,0մմ,L-1,1 մ | մ | 1,100 | | | |
| 8 | շուկա | Ռետինե տակդիրների տեղադրում 5մմ հաստ | մ² | 1,100 | | | |
| 9 | 11-11 | Բետոնե հիմքերի կառուցում. Կ-7,5 դասի բետոնից, հենարանների տակ | մ3 | 0,710 | | | |
| 10 | 1-969 | Ավելորդ գրունտի փռում տեղում | 100մ³ | 0,009 | | | |
| | | **Խողովակների մոնտաժում/վերգետնյա հատված/** | | | | | 3,11% |
| 1 | 22-66 | Պողպատե խողովակի տեղադրում d=108x4,0մմ,հիդրավլիկ փորձարկումով | մ | 40,000 | | | |
| 2 | 22-129 | Խողովակների ջրամեկուսացում, 2 շերտ բիտումի մածիկով | մ | 40,000 | | | |
| 3 | 15-616 | Մետաղական հենարանների ներկում 2 շերտ | 100մ² | 0,0550 | | | |
| | | **Խողովակների մոնտաժում/ստորգետնյա հատված/** | | | | | 63,27% |
| 1 | 1-58 | Խրամուղու մշակում էքս. 4-րդ կարգի գրունտում | 1000 մ³ | 0,750 | | | |
| 2 | 1-962 | 4-րդ կարգի գրունտի լրամշակում ձեռքով | 100 մ³ | 0,375 | | | |
| 3 | 22-66 | Պողպատե խողովակի տեղադրում d=108x4,0մմ,հիդրավլիկ փորձարկումով | մ | 71,000 | | | |
| 4 | Ինֆ. տեղ. | Պողպատե ծնկալ108մմ | հատ | 1,000 | | | |
| 5 | 15-616 | Մետաղական խողովակների և ծնկալների հակակոռոզիոն ներկում բիտումային մածիկով | 100մ² | 0,2520 | | | |
| 6 | 22-119-1 | Խմելու ջրի համար պոլիէթիլենային խողովակի մոնտաժում d=110մմ, 25,0մթն/ճնշ. | մ | 200,0 | | | |
| 7 | 22-119-1 | Խմելու ջրի համար պոլիէթիլենային խողովակի մոնտաժում d=110մմ, 8,0մթն/ճնշ. | մ | 800,0 | | | |
| 8 | 22-365 | Պ/է ձևավոր մասի տեղադրում d=110մմ-45⁰ | հատ | 2,00 | | | |
| 9 | 22-365 | Պ/է ձևավոր մասի տեղադրում d=110մմ-90⁰ | հատ | 2,00 | | | |
| 10 | 1-967 | Փափուկ գրունտից նախապատրաստական շերտի իրականացում ձեռքով | 100մ³ | 0,7500 | | | |
| 11 | 1-967 | Փխրեցված տեղի գրունտից պաշտպանիչ շերտի իրականացում ձեռքով | 100մ³ | 1,8500 | | | |
| 12 | 1-532 | Բնահողի հետլիցք և հարթեցում բուլդոզերով մինչև 10մ տեղափոխումով | 1000 մ³ | 0,480 | | | |
| 13 | 1-969 | Ավելորդ գրունտի փռում տեղում | 100մ³ | 0,100 | | | |
| 14 | 22-312 | Ջրագծի լվացում, վարակազերծումով | կմ | 1,1110 | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Պաշտպանիչ պատյանի կառուցում ճանապարհային անցումներում** | | | | | 6,78% |
| | | **1.Ասֆալտապատ հատված** | | | | | |
| 1 | 27-33 | Ասֆալտի ծածկույթի քանդում | 100մ$^3$ | 0,007 | | | |
| 2 | 27-22 | Խճային հիմքի իրականացում 100մմ հաստությամբ | մ$^3$ | 0,700 | | | |
| 3 | 17-251 | Բիտումի տարածում խճային հիմքի վրա 4,12 կ/ 1մ$^2$ | տ | 0,029 | | | |
| 4 | 27-164-12 27-165-12 | Ծածկի շերտի իրականացում 6սմ հաստութ.խոշորահատիկ ա/բ խախնուրդից | 100մ$^2$ | 0,070 | | | |
| 5 | 27-164-14 | Ծածկի շերտի իրականացում4սմ հաստութ.մանրահատիկ ա/բ խախնուրդից | 100մ$^2$ | 0,070 | | | |
| | | **2.Պաշտպանիչ պատյանի կառուցում** | | | | | |
| 1 | Ինֆ. տեղ. | Պողպատե d=219x4,0մմ խողովակից պատյանի տեղադրում | մ | 25,000 | | | |
| 2 | 22-129 | d=219x4,0մմ խողովակների ցրամեկուսիչ շերտ բիտումի մածիկով | մ | 25,000 | | | |
| | | **Դատարկման հոր 2 հատ** | | | | | 2,84% |
| 1 | 1-962 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով, հորի տակ | 100 մ$^3$ | 0,022 | | | |
| 2 | 11-6 | Խճի նախապատրաստ 100մմ հաստ. | մ3 | 0,600 | | | |
| 3 | 23-144 | Պոլիմեր-ավազային դիտահորի տեղադրում | մ$^3$ | 1,28 | | | |
| 4 | Ինֆ. տեղ. | Պոլիմերա-ավազային դիտահոր Ф900մմ, h=900 /2 կտորից/ | հատ | 2,0 | | | |
| 5 | Ինֆ. տեղ. | Պոլիմեր-ավազային կափարիչի տեղադրում լայնացված օղակով Ф620մմ | հատ | 2,0 | | | |
| 6 | Ինֆ. տեղ. | ՊԷ փականի տեղադրում, d=50մմ | հատ | 2,0000 | | | |
| 7 | Շուկա | ՊԷ D50մմ կարճախողովակների մոնտաժում,L-30սմ | հատ | 2,000 | | | |
| 8 | 11-11 | Բետոնե հենարանի կառուցում. Վ-7,5 դասի բետոնից | մ3 | 0,011 | | | |
| 9 | 22-117 | Պոլիէթիլենային խողովակի մոնտաժում ճանապարհից դուրս բերման համար d=50մմ, | մ | 10,000 | | | |
| 10 | 22-365 | ՊԷ ձևավոր մասի տեղադրում ,ձգումի կցամաս | հատ | 3,00 | | | |
| 11 | 22-366 | Գոտի միացում ՊԷ 110*50մմ | հատ | 3,0000 | | | |
| 12 | 1-967 | Փափուկ գրունտից նախապատրաստական շերտի իրականացում ձեռքով | 100մ$^3$ | 0,0070 | | | |
| 13 | 1-967 | Փխրեցված տեղի գրունտից պաշտպանիչ շերտի իրականացում ձեռքով | 100մ$^3$ | 0,0140 | | | |
| 14 | 1-532 | 3-րդ կարգի բնահողի հետլիցք բուլդոզերով | 1000 մ$^3$ | 0,005 | | | |
| 15 | 1-56 | 4-րդ կարգի գրունտի մշակում էքս. | 1000 մ$^3$ | 0,007 | | | |
| 16 | 1-982 | 4-րդ կարգի գրունտի լրամշակում ձեռքով | 100 մ$^3$ | 0,0035 | | | |
| | | **Օդահեռ հոր 3 հատ** | | | | | 4,39% |
| 1 | 1-962 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | 100 մ$^3$ | 0,020 | | | |
| 2 | 11-6 | Խճի նախապատրաստ 100մմ հաստ. | մ3 | 0,650 | | | |
| 3 | 23-144 | Պոլիմեր-ավազային դիտահորի տեղադրում | մ$^3$ | 1,92 | | | |
| 4 | Ինֆ. տեղ. | Պոլիմերա-ավազային դիտահոր Ф900մմ, h=900 /2 կտորից/ | հատ | 3,0 | | | |
| 5 | Ինֆ. տեղ. | Պոլիմեր-ավազային կափարիչի տեղադրում լայնացված օղակով Ф620մմ | հատ | 3,0 | | | |
| 6 | 22-366 | Գոտի միացում ՊԷ 110*50մմ | հատ | 3,0000 | | | |
| 7 | 22-393 | Օդահեռի տեղադրում d=50մմ | հատ | 3 | | | |
| 8 | 11-11 | Բետոնե հենարանի կառուցում. Վ-7,5 դասի բետոնից | մ3 | 0,016 | | | |
| 9 | 1-981 | 3-րդ կարգի գրունտի հետլիցք ձեռքով | 100 մ$^3$ | 0,012 | | | |
| 10 | 1-969 | Ավելորդ գրունտի փռում տեղում | 100մ$^3$ | 0,025 | | | |
| | | **Ջրագծի խորքային պոմպին միացման հանգույց** | | | | | 1,46% |
| 1 | 22-385 | Պողպատե սողնակավոր փականի տեղադրում d=100մմ | հատ | 1,000 | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 22-433 | Պողպատե կցաշուրթի տեղադրում d=100մմ | հատ | 2,000 | | | |
| 3 | շուկա | Ռետինե միջադիրների տեղադրում Փ-100մմ | հատ | 2,000 | | | |
| | | **Փականային հոր** | | | | | 13,47% |
| 1 | 22-385 | Պողպատե սողնակավոր փականի տեղադրում d=200մմ | հատ | 5,000 | | | |
| 2 | 22-433 | Պողպատե կցաշուրթի տեղադրում d=200մմ | հատ | 10,000 | | | |
| 3 | շուկա | Ռետինե միջադիրների տեղադրում Փ-200մմ | հատ | 10,000 | | | |
| | | **Խորքային պոմպի սանիտարական գոտու ցանկապատ** | | | | | 2,73% |
| 1 | 1-962 | 4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | 100 մ³ | 0,0104 | | | |
| 2 | 11-6 | Խճի նախապատրաս 50մմ հաստ. | մ3 | 0,100 | | | |
| 3 | 9-207 | Մետաղական խողովակից հենարանների մոնտաժում/13հատ,L-2մ,Փ-57մմ/ | տն | 0,108 | | | |
| 4 | Ինֆ. տեղ. | Թիթեղ պողպատե , հարթ 100*100*4մմ | մ² | 0,130 | | | |
| 5 | 22-66 | Պողպատե խողովակի տեղադրում d=57x3,0մմ,L-2 մ | մ | 26,000 | | | |
| 6 | 6-21 | Բետոնե հիմքերի կառուցում Վ-12,5 բետոնից | մ³ | 0,94 | | | |
| 7 | 15-622 | Մետաղական պտուտակներ,ներդիր էլ. և դռնակի երկշերտ հակակոռոզիոն ներկում սուրիկով | 100մ2 | 0,068 | | | |
| 8 | 48-1561 կիրարկել ի | Մետաղական ցանկապատի մոնտաժում փշալարից | 100մ | 2,952 | | | |
| 9 | 9-49 | Մետաղական դռան մոնտաժում | տ | 0,021 | | | |
| 10 | Ինֆ. տեղ. | Պողպատե անկյունակ 40x40x4մմ | մ | 8,380 | | | |
| 11 | Շուկա | Ծխնի Փ=20մմ | հատ | 2,000 | | | |
| 12 | Շուկա | Կողպեք կախովի | հատ | 1,000 | | | |
| | | **Ընդամենը** | | | | | |
| | | **20 % ԱԱՀ** | | | | | |
| | | **Ընդամենը** | | | | | 100% |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

---------------------
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ,
Ք. Իջևան, Նալբանդյան 2

ՀՎՀՀ՝07616336
Հ/h՝220103330787000
Բանկ՝«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Տավուշ մ/ճ
Տնօրեն Գրիշա Բաղդյան

---------------------
/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
« 3 » 03 2021թ. կնքված
ՀԾ-ԽՈՒՄ-ԾՁԲ-2021/1/1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | ... | 229,000 | 229,000 | 229,000 | 229,000 | 229,000 | 229,000 | 229,000 | 229,000 | 229,000 | 229,000 | 229,000 | **229,000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՄԻՔՆԱՐ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ,
Ք. Իջևան, Նալբանդյան 2

ՀՎՀՀ՝07616336
Հ/h՝220103330787000
Բանկ՝«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Տավուշ մ/ճ
Տնօրեն Գրիշա Քաղալյան

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
« 3 » 03 20__թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«    » «            » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 3 » 03 2024թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. __________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն